ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Հարաւային Ռուսաստանի հայերի գաղթականութեան պատմութեան համար նիւթերից:

Изъ Матеріаловъ для Исторіи армянъ, на югѣ Россіи. Одесса, 1911. Отдѣльный оттискъ изъ XXIX тома «Записокъ Императорскаго Одесскаго Общества Исторіи и Древностей.

Պ. Լ. Մ. Մելքիսէթ-Բէկովը գեղեցիկ միտք է յղացել ռուսերէն գրուածքներով ծանօթացնել ռուս հասարակութեանը Հարաւային Ռուսաստանի հայ գաղթականութեան անցեալին ու ներկային:

Այս ուղղութեամբ Ամքերմանի և Խրիմի հայերի անցեալի և ներկայի մասին համառօտ տեսութիւնը հրատարակելուց յետոյ, այժմ տալիս է վերև յիշուած վերնագիրը կրող մի գրքոյկ ևս 14 մեծադիր երեսներով, որի գլխաւոր գլուխներն են.

ա. Նովոբոսիայի և Բեսսարաբիայի հայ Լուսաւորչական առաջնորդներ.

բ. Բուդաղի հայերէն արձանագրութեան քարը.

գ. Օդեսայի հայ եկեղեցին.

դ. Օդեսայի Պատմութեան և Հնութեան Կայսերական ընկերութեան մատենադարանի ձեռագրերից.

1. *Հայերի խնդիրները Վ. Ս. Պոպովին* (В. С. Попову)
2. *Հայերի գաղթականութեան* (1779 թ.) *գործը:*

Ա.

Նովոբոսիայի և Բեսսարաբիայի հայ Լուսաւորչական առաջնորդներ վերնագրով գլխում պ. Մելքիսէթ-Բէկով աղբիւր ունի 1, հանգ. Գաբրիէլ արքեպիսկոպոսի յօդուածը, (որ տպուած է Օդեսայի Պատմութեան և Հնութեան Կայսերական ընկերութեան հրատարակութեան IX հատորում, 1875 թուին մասն II եր. 315—316.) որ համարում է ոչ լիովին ճիշդ, 2, Քիշնևի կոնսիստորիայի հաղորդած տեղեկութիւնները,

և 3, Իւր ունեցած վասաները։ Այդ աղբիւրների համեմատ համառօտում է Բեսսարաբիայի առաջնորդութեան ու առաջնորդների պատմութիւնը ըստ այսմ.

Թուրքերի տիրապետութեան ժամանակ Բեսսարաբիան, Մոլդավիան, Վալախիան և այլ տեղերը կազմում էին միասին մի առանձին թեմ։ Այդ ժամանակ Ռուսաստանի իշխանութեան տակ եղած միւս գաղութները միասին կազմում էին մի այլ թեմ, որի առաջնորդը մինչև 1800 թիւն էր Յովսէփ արքեպիս. Արղութեանը, որ ընտրուեց կաթուղիկոս, բայց չօծուած վախճանուեց։

Երբ Բեսսարաբիան միանում է Ռուսաստանին (1812 թ.), թեմական առաջնորդներն էին—Բեսսարաբիայում՝ Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարեանը, իսկ Ռուսաստանում՝—Յովհաննէս արքեպիսկոպոս Ներսիսեանը։ Մօտաւորապէս այդ ժամանակ Ռուսաստանի ընդարձակ թեմը երկուսի բաժանուեց, առաջին մասը այն է Նախիջևանը, Նովոբօսիան, Իրիմը, ամբողջ հարաւարևմուտքը և Եւրոպական Ռուսաստանի արևմտեան կողմը ընկաւ Բեսսարաբիային և կազմուեց Նախիջևան—Բեսսարաբիայի նոր թեմը, Քիշնևում ունենալով առաջնորդական աթոռը. իսկ երկրորդ մասը—այն է, հարաւ արևելեան և Եւրոպական Ռուսաստանի արևելեան մասը, Սիբիրը և Միջին-Ասիական երկրները կազմեցին այլ թեմ, այդ է Աստրախանինը, համանուն քաղաքում ունենալով առաջնորդական աթոռը։

Ռուսաստանի տիրապետութեան տակ ընկնելուց յետոյ Բեսսարաբիայի հայ առաջնորդներն ու կառավարիչներն են.

1. Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարեան 1806—1627 թ. մինչև իւր մահը, որ տեղի ունեցաւ Բուրսվինայի Սուչավա քաղաքում և թաղուեց Հաճիկատար ս. Աստուածածնի վանքում։ Նրա մահից յետոյ թեմը ժամանակաւորապէս կառավարում է Աստրախանի առաջնորդ Յովհաննէս արքեպ. Ներսիսեանը (Գառնակերեանց)։

2. Ներսէս արքեպիսկոպոս Շահազիզեան—Կամսարական 1828—1845 թ.։ 1843 թուին ընտրուեց ամենայն Հայոց կաթուղիկոս և 1846 թուին օծուեց կոչուելով Ներսէս Ե.։ Էջը Ներսէս կաթուղիկոսը, որ պատմութեան մէջ յայտնի է Ներսէս Աշտարակեցի անուամբ, է ամենահամբաւաւոր և ժողովրդից սիրուած կաթուղիկոսներից մէկը։ Նա Թիֆլիզում հիմնել է Ներսիսեան հայ հոգևոր դպրոցը, որ իւր ժամանակին կրթական մեծ դեր է կատարել, որպէս Հայոց մասաւոր և բարոյական կեանքի հոսանքի միջավայր։ Ներսէս Ե. 1857 թուին վախճանուեց Թիֆլիզում և թաղուեց Էջմիածնում։

Ներսէսի Էջմիածին դնալով թեմը ժամանակաւորապէս կառավարում էին կոնսիստորիայի անդամները։

3. Մատթէոս արքեպիսկոպոս Վեհապետեան 1847—1857 թ. մինչև Աստրախանի առաջնորդ նշանակուելը։ Նա 1866 թուին վախճանուեց Աստրախանում և այնտեղ էլ թաղուեց։

4. Գաբրիէլ վարդապետ Այվազեան (Այվազովսկի), Բարձրագոյն հաստատուն թեմամբ կառավարիչ եղաւ 1857—1866 թ.։ Նա հռչակաւոր ծովանկար Յ. Այվազովսկու եղբայրն էր և հայ եկեղեցու ամենաշնորհալի և ակնառուոր հոգևոր պաշտօնեաներից մէկը, դուրս էր եկել Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնից, հիմնադիր Թէոդոսիայի Խալիպեան միջնակարգ դպրոցի։ Յետոյ, եպիսկոպոսական աստիճանում, ս. Էջմիածնի Սինոդի անդամ և ձեմարանի տեսուչ եղաւ. այնուհետև արքեպիսկոպոսի կոչմամբ Թիֆլիզի թեմի առաջնորդ։ Վախճանուեց Թիֆլիզում և այնտեղ էլ վանքի աւագ եկեղեցու բակում թաղուեց։

5. Եղիազար արքեպիսկոպոս Տէր Կարապետեան, Բարձրագոյն հաստատուն թեմամբ կառավարեց թեմը 1865—1867 թ. վախճանուեց և թաղուեց Էջմիածնում։ Նրանից յետոյ թեմը ժամանակաւորապէս կառավարեց Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեանը։

6. Գէորգ արքեպիսկոպոս Տէր Միրզեան 1868—1871 թ. վախճանուեց և թաղուեց Քիշնևի առաջնորդական եկեղեցու դաւթում։ Նրա մահից յետոյ 1871—1877 թ. թեմը չունեցաւ առաջնորդ և ժամանակաւոր կերպով կառավարում էին իրար յաջորդելով Գէորգ վարդապետ Իշխան-Աբամէլիքեան և Սարգիս վարդապետ Տէր Գասպարեանց։

7. Ստեփան վարդապետ Մխիթարեան Բարձրագոյն հաստատուն թեմամբ կառավարեց թեմը 1877—1879 թ.։

8. Մակար արքեպիսկոպոս Տէր Պետրոսեան 1878—1885 թ. լինելով նաև Սինոդի անդամ (1883 թուից)։ 1885 թուին ընտրուեց ամենայն Հայոց կաթուղիկոսութեան համար երկրորդ թեկնածու և հաստատուեց կաթուղիկոս «ըստ կամաց հոգևորականութեան», օծուեց 1885 թուին Մակար Ա. կոչմամբ. վախճանուեց և թաղուեց ս. Էջմիածնում 1891 թուին։

Տէր Մակարի Էջմիածին մեկնելով թեմը ժամանակաւոր կերպով կառավարում էր կոնսիստորիայի անդամների ձեռքով։

9. Գրիգոր արքեպիսկոպոս Սագինեան 1887—1889 թ. վախճանուեց և թաղուեց Քիշնևի առաջնորդական եկեղեցու դաւթում։ Նրա մահից յետոյ թեմը ժամանակաւոր կերպով

կառավարեց Համազասպ վարդապետը, որ այժմ Էջմիածնում է ապրում։

10. Գրիգոր եպիսկոպոս Աղաֆիրեանց Բարձրագոյն հատատուած կառավարիչ Թեմի. 1891—1894։ Յետոյ՝ Էջմիածնի Սինոդի անդամ, վախճանուեց և թաղուեց Էջմիածնում։*

11. Յուսիկ վարդապետ Մովսիսեան. Բարձրագոյն հատատուած կառավարիչ Թեմի, 1884—1897 (ուղիղ 1895—1898). յետոյ կարգուեց Էջմիածնի Սինոդի անդամ. եպիսկոպոսի և արքեպիսկոպոսի աստիճանում՝ Երևանի Թեմի կառավարիչ. այժմ Էջմիածնի Սինոդի անդամ է (երկրորդ անգամ)։

12. Ներսէս արքեպիսկոպոսն Խուդավերդեան Թեմի այժմեան առաջնորդ. Երևանի Թեմի կառավարիչն էր մինչև 1899 թիւը երբ տեղափոխուեց Բիշնևի Թեմը։

Բ.

Բուդապի հայերէն արձանագրութեան քարը.

Ակքերմանի հայոց Երեմիա քահանայ Ապրիլեանը 1910 թ. ամառը Բեսսարաբիայի Բուդաղ աւանին այցելելիս՝ մի դերեզմանացու այգում տեսել է մի քար հայերէն արձանագրութեամբ, որ վերաբերում է ԺԸ. դարին։

Այդ արձանագրութեան քարը ոսպիտակ մարմար է մօտ մի խորանարդ արշին մեծութեամբ։ Քարի երեսին նկատւում են զանազան տեսակ քանդականկարներ, իսկ երկու միմեանց հակառակ կողերին՝ հայերէն գլխատառերով այս արձանագրութիւնն է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՓԻԼԵՅԻ ՏԻՐԱՅՈՒ ՄԵԼԻՔՈՆԻ ԴՈՒՍՏՐ ԵՂԻՍԱԲԷԹԻ, ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԹՎԻՆ 1214 ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ։

Փիլի գիւղաքաղաքը գտնւում է Ակքերմանի և Իզմայիլի գաւառների սահմանում Դունի Քիլիեան բազուկի մօտ։ Քիլին ամենևին առնչութիւն չունի Փոքր-Ասիայի Կիլիկիայի հետ, ուր հայերը երբեմն ունէին առանձին Կիլիկեան թագաւորութիւնը, ուր այժմ գտնւում է Կիլիկիայի կաթուղիկոսութեան աթոռը Սիս քաղաքում։

* Գրիգոր եպիսկոպոս Աղաֆիրեանը վերադառնալով Էջմիածին. կարգուեց իր ցանկութեան համեմատ Ազուլիսի ս. Թոմայի վանքի վանահայր, ուր եւ վախճանուեց ու թաղուեց 1897 թուին։—Մենք նոյնութեամբ առաջ բերելով պ. Մելիքսէթ-Բէկովի առաջնորդների ցանկը. հարկ համարեցինք նեղեւ վրիպումները ուղղել։ Ե. Ա., Ե.

Այս արձանագրութիւնը ուշադրութեան արժանի է տիրացու Մեղքանի Քիլեցի մակդիրով։ Եթէ Քիլիում եկեղեցի չլինէր, չէր էլ կարող Քիլեցի տիրացու լինել։ Հետևաբար, գոնէ արձանագրութեան ցոյց տուած 1765 թուին պէտք է լինէր Քիլիում հայ եկեղեցի ծխերով։ Եւ յիրաւի, թուրքերի տիրապետութեան ժամանակ Քիլիում կային հայ, հրէայ, մոլդաւան բնակիչներ, բայց Քիլին Ռուսաստանի հետ միացուելուց յետոյ բնակիչների մեծագոյն մասը բաղկացաւ վերկիրսոներից ու մալրոսներից։ Հայ կաթոլիկ Մինաս վարդապետ Բժշկեանը, որ այցելել է Քիլին ԺԹ. դարի սկզբին, ցոյց է տալիս՝ որ— «առաջ այստեղ եղել է շատ հայ, նրանք ունեցել են ս. Աստուածածնի անունով եկեղեցի, բայց շատերը տեղափոխուել են Դրիդոբիոպոլ», որ-ինչպէս յայտնի է, հիմնուել է 1792 թուին, Ակերմանի, Իզմայիլի, Քիլիի և Կաուշանի հայ գաղթականների ձեռքով։ Բացի այս Քիլիի պրաւոսլաւ աւագ եկեղեցում մինչև այս ժամանակ պահպանուում էին մի քանի հայ արձանագրութիւններ, փորագրուած քարէ սալերի վերայ զանազան թուականներով (ԺԷ և ԺԸ դարեր), որոնց մասին յիշում է Գաբրիէլ վարդապետ Այվազովսկին, Խ. Քիւշուկ-Յովհաննիսեանը։ Այս ամենից հետևում է, որ անկասկած, Քիլիում եղել է հայ եկեղեցի, որը բացի թողի է եղել հայերի գաղթելովը եկատարինէ Մեծի սկզբնաւորած Դրիդոբիոպոլ քաղաքը։ Ըստ այսմ, պարզ է, որ Քիլիի հայ եկեղեցին պէտք է որ 1792 թուից յետոյ կրծանուած ու անհետացած լինի։

Գ.

ՕԴԵՍԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայ կաթոլիկ վարդապետ Մինաս Բժշկեանը, որ ԺԹ. դարի սկզբին այցելել է Օդեսային, այսպէս է նկարագրում այնտեղի հայերի դրութիւնը.

«Հայերը ապրում են քաղաքի հարաւային կողմում, և 30 ընտանիքից աւելի են. գաղթել են Դրիդոբիոպոլից. չունեն առանձին եկեղեցի, և ժամերգութիւնը կատարում են տներում։» Ուրեմն Օդեսայի հայը ԺԹ. դարի սկզբում չունէին եկեղեցի։ Օդեսայի եկեղեցու աւագ քահանայ Դրիդոր Խաչատանջեանը Մշակում 1910 թ. № 26, ասում է.

«Այժմեան եկեղեցին առաջ աղօթատուն էր, որը հետզհետէ մեծանալով, յատկապէս մայեօր Նաստվալովի 1880 թ. 8000 ռուբլի նուիրաբերութեամբ սարացաւ այն տեսքը, որ այժմ ունի»։

Եկեղեցին նուիրուած է ս. Գրիգոր Լուսաւորչի անուան և գտնուում է Բեսսարաբիայի հայ թեմում:

Արևմտեան դռան բարաւորի վերայ ներսի կողմից կայ հետևեալ արձանագրութիւնը.

«Օգնականութեամբ Աստուծոյ, կառուցաւ զանգակատունս Օդեսայի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյս հայոց արդեամբք գերապնիւ հայազգի մայոր Թոմայի Նացվալեանցի, յամի Տեառն 1884 և յաղգական 1333».

Օդեսայի հայ եկեղեցին իւր հիմնարկութեան օրից սկսած ունեցել է հետևեալ քահանաները.

1. Յովհաննէս աւագ քհնյ. Թաթոսիդեան վախճանուած 1908 թուի օգոստոսին.

2. Գրիգոր աւագ քհնյ. Խորասանջեանց վախճանուած 1910 թ. նոյեմբերին. որից յետոյ ժամանակաւորապէս պաշտօնավարեց Հին-Խրիմի քահանայ Հ. Քէշիշեանը:

3. Գրիգոր (ուղիղ Յովհաննէս) քահանայ Զուբարեանը ընտրուեց ծխական ժողովով և հաստատուեց թեմական առաջնորդից ու կառավարութիւնից այս 1911 թուին:

Եկեղեցու երեսփոխանը 25 տարուայ ընթացքում և աւելի՝ է Ս. Ամատուրովը (Սիրական Աստուածատրեանց):

Եկեղեցու մօտ կայ մի դասեան եկեղ.-ծխ. դպրոց և հայ աղքատների հոգաբարձութիւն:

Դ.

Օդեսայի պատմութեան եւ ճնութեան Կայսերական ընկերութեան մատենադարանի ձեռագրերից...

Այս գլխում պ. Լ. Մ. Մելքիսէթ-Բէկովը տալիս է համառօտ տեղեկութիւն Եկատերինա Բ. Կայսրուհու գործավար Գաղտնի խորհրդական (Тайный Совѣтникъ) Վասիլիյ Ստեփանովիչ Պօպովի մասին, որը մեծ դեր է խաղացել Ռուսաստանի հարաւակողման հայերի պատմութեան մէջ: Նա ասում է.

Վասիլի Ստեփանովիչ Պօպովը միշտ էլ առանձին բարեացակամ վերաբերմունք է ունեցել դէպի հայերը, և շատ անգամ է հայոց գործերի համար միջնորդ հանդիսացել Եկատերինէ Մեծի առաջ: Այդ բանում մենք համոզւում ենք այն բազմաթիւ գրաւոր տուեալներով, որոնք պահպանուած են մինչև մեր ժամանակը: Վ. Ս. Պօպովի ջերմ վերաբերմունքը դէպի հայերը երևում է Եկատերինոսլավի նահանգապետ Վ. Վ. Կոխովսկու մի նամակից առ Վասիլիյ Ստեփանովիչը, որի բովանդակութիւնն է: «Ձերդ գերազանցութեան պատուէրը

հայերի վերաբերությամբ ես կը կատարեմ ճշդությամբ։ Ես ոչ ինչ չեմ խնայի ցոյց տալու նրանց ամեն տեսակ կարևոր օգնություն, նրանց ցանկություններին բաւականություն տալով համաձայն պետական շահերի։ Համարձակում եմ խնդրել որ նրանց մասին հաճելիք հանգիստ լինել։ Երբ այն կողմում լինեմ, նրանք շնորհակալություն կը մատուցանեն Ձեզ, նրանց մասին Ձեր Գերազանցության հոգացողության համար»։

Բացի այս, Վ. Ս. Պօպովի բարեացակամությունը առ հայերն նկատւում է և այն երկու փաստաթղթերի մէջ, որոնց պատճէնները պահում են Օդեսայի պատմության և հնության կայսերական ընկերության ձեռագրերի մատենադարանի հաւաքածոյում infolio II 29, 63 v. 310—312 v.։

Այդ փաստաթղթերը երկու խնդիրներ են, որ Նոր-Նախիջևանի հայերը մատուցել են Վ. Ս. Պօպովին։ Առաջին թուղթը աղերսագրի ընոյթ ունի, որով Նախիջևանի հայերը, ցոյց տալով իրանց կարիքները, աղերսում են բաւարարել նրանց։ Երկրորդ փաստաթուղթը ուղերձի ընոյթ ունի, որով նոյն հայերը յայտնում են Վ. Ս. Պօպովին շնորհակալություն նրա հոգածության և հովանաւորության համար, և հայցում են նրա միջնորդությունը Բարձրագոյն Իշխանության առաջ հայերի մասին։ Այս նախաբանից յետոյ պ. Մելիքսէթ-Բէկով դնում է յիշեալ փաստաթղթերը իրանց ուղղագրությամբ, և որ մենք հայ թարգմանությամբ մէջ ենք բերում։

1.

ա.

«Ձերդ Գերազանցություն, ողորմած Տէր, Վասիլիյ Սաեփանովիչ. Նախիջևանի հասարակության ժողովուրդը, որ հեծում է թշուառության լծի տակ, անընդհատ արտայայտելով իւր սրտագին կարեկցության զգացմունքը աղքատներին բաւարարելու և յանձանձելու առիթով նրա վերայ ծանրացած պետական հարկի մասին, չէր դադարում իւր աղերսանքները անելու մեզ արուած բարիքների պատճառ հանդուցեալ վսեմափայլ իշխանին (խօսքը Պոտեմկինի մասին է), որ մատուցւում էին նրան հայոց Յովսէփ սրբազան արքեպիսկոպոսի միջոցով, որը չորս տարուայ ընթացքում մեր ներկայացուցիչների հետ, ինչպէս Ձերդ Գերազանցության յայտնի է, միջնորդություններ էր անում Նորին Վսեմափայլության առաջ. մարդկության այս բարերարը թշուառների թախանձանքի

ձայնին ունկդիր լինելով իւր բերանով տալիս էր մեզ սիրալիր հաւատացումներ, իւր ջանքերով Բարձրագոյն Թագուհու աջից ձեռք բերելու, որով լցնում էր բոլոր սրտերը անհերկբայ յոյս, բայց երբ նրա կեանքի ճրագը հանգաւ, մենք էլ մնացինք մեր տառապանքի խաւարը վայրում, ուր այժմ մեր միակ մխիթարութիւնը Ձեր մարդասէր սիրան է, որ բորբոքւում է ժողովրդի բարօրութեամբ և վառւում է նրա բարիքի հոգածութեամբ, որով բարեհաճեցիք խոստանալ մեզ ողորմածաբար ներկայացնել և ձեռք բերել մեր այն խնդիրների վերաբերութեամբ ողորմած որոշումներ, որ մինչև այսօր արժանի չլինելով ունենալ, յիշեցնում ենք։ Մեր խնդիրը Նորին Կայսերական Մեծութեանը ամենահպատակօրէն մատուցանելու համար ուղևորում է Հայոց Ցոմէի արքեպիսկոպոսը մեր ընտրուած և լիազօրուած պատգամաւոր Պրիմեր Մայեօր և Նշանակիր (кавалеръ) Երբահամովի և Կարապետ Կարակաշեանի հետ, տպաւորւում եմ Ձեզ մարդկութեան իսկական բարերար, բոլոր հատարակութեան կողմից խոնարհագոյն խընդրով, ողորմած աչքով նայեցէք այդ խնդրին, գործ դրէք Ձեր ջանքը որ այս անբաղդներին և տրամութեան խաւարի մէջ նստողներին և թշուառութիւններից չաղատուածներին լուսաւորի Միապետի բարեհաճութեան պայծառ ճառագայթը, ազատելով մեզ այդպիսի պահանջներից և զեղանի իւր մայրական գթառատութիւնը մեր միւս խնդիրների վերաբերութեամբ։ Ձեր Գերազանցութեան այս բարերարութիւնը կը բորբոքէր բոլորի սրտերը յաւիտեանս լինել շնորհապարտ Ձեր բարերարութեան համար, յետ այսորիկ լինելով խորին անձնանուիրութեամբ։

Բ։

Ողորմած Տէր։ Վասիլիկ Ստեփանովիչ։ Մեր նախկինանի հատարակութիւնը իմացաւ մեր պատգամաւոր Պրիմէր Մայեօր ու Նշանակիր Իվան Երբահամովից մեր հատարական գործերի համար Ձեր ողորմած ջանքերը։ մատուցանում ենք մեր հանուր և խոնարհագոյն շնորհակալութիւնը ձեր ջանքերի համար։ Բայց ինչպէս այժմ մեր գործերը մտնում են վախճանին, և մնում են, միայն որ Ձերդ Գերազանցութիւնը ներկայացնի մեր մայր Ամենաողորմածագոյն Թագուհու ամենագթած քննութեանը։ Եւ դրա համար էլ ամենախոնարհաբար խնդրում ենք ձեր հովանաւորութեամբ ձեռք բերել մեր բոլոր խնդիրների մասին Նորին Կայսերական Մեծութեան ողորմած բարեհաճու-

թիւնները։ Այդ բարեհաճութիւնները կը լինին ձեր յաւիտենական յիշատակը մեր բոլոր հասարակութեան համար և պարտաւոր կը լինենք Ամենաբարձրեալի գոհութեան սեղանի առաջ աղօթել Ձեր Գերազանցութեան յաւատաւ առողջութեան համար։ Մեր կարիքների մասին այսուհետև համարձակելով մանրամասնօրէն գրել, յանձնարարեցինք Պրիմէր-Մայեոր և նշանակիր Աբրամովին նեցկայացնելու Ձերդ Գերազանցութեանը, յանուն մեր մայր Նորին Կայսերական Մեծութեան, մեր խնդրի հետ։ Որ՝ որպէս այսուհետև բոլոր հասարակութեան ընդհանուր ձայն կարժանանայ Ձեր բարձր ուշադրութեանը և այդպէս կը բաղդաւորի մեզ իւր ողորմած միջնորդութեամբ, բոլորս ամենախոնարհաբար խնդրում ենք, ենթարկելով ընդ ամին Ձեր Գերազանցութեան ողորմած հովանաւորութեանը այդ շատ օգիցների անդուլ ջանքերը, որ հասարակութեան օգտին գործադրել է 15 տարի շարունակ՝ մեր իշխանաւորը լինելով։ Նրա բարի կարգադրութիւնները և եռանդուն ծառայութիւնը, յիրաւի, արժանի են փարձառութեան, որի մասին մեր բոլոր հասարակութիւնը իրան պարտաւոր է գտնում մատուցանելու Ձերդ Գերազանցութեան այս ամենախոնարհ խնդիրը։

Ազնուականներից։ Բոգդան Լազարեվ, Սաեփան Զալոխուշիվ, Նիկիտա Պետրով, Մարտին Իվանով։ Բոգաբացիներից։ Մանուիլա Իվանով, Կարապետ Իվանեսով, Դանիլա Խոջայեվ։ Աւագ (ազգանունը անընթեռնելի)։ Վաճառականներ։ Յարութիւն Պօպով, Գասպար Մարգարով, Խաչիրեա Պողոսով, Օվանէս Կոպեալիեվ։ Մեշչաններից։ Խաչիկ Պետրոսով, Ղազար Գերկիշկարով, Խաչիրեա Պետրոսով, Կիրակոս Արութիւնով։ Արհեստաւորներից։ Բաբի Պարսեղով, Սաեփան Սարգիսով, Ագուն Ակսենտով, Մագարաիչ Ռոմատուրով։ 26 յուլիսի 1793 ամի։ Նախիջևան քաղաք։

2.

Հայերի գաղթականութեան (1779 թ.) գործը.

Օգնասայլ պատմութեան և հնութեան կայսերական ընկերութեան ձեռագրերի մէջ, ասում է գ. Մելքիսէթ-Բէկովը երեք փաստաթղթերի պատճէններ էլ կան, որոնք վերաբերում են հայերի 1779 թուի գաղթականութեան և գտնուում են Բոստովեան ս. Դիմիտրու ամրոցի արխիվի «Архивъ крѣпости Св. Димитрія Ростовскаго» հաւաքածոյի մէջ, in folio II. 28, 62. № 61. v. 197—199.

Այդ փաստաթղթերը Բախմուտի գաւառային դիւանատան գրութիւններն են Բաստովի ամրոցի աւագ—ամրոցապետ (оберъ—комендантъ) Գէներալ Մայոր Սիմէոն Գրիգորեվիչ Գուրիեվին գրած, Եկատերինոսլաւի վերայով Բախմուտ հասած գաղթական հայերին գէպի Բաստով ուղարկելիս, այնտեղ բնակեցնելու առիթով։

Առաջին յայտարարութիւն փաստաթուղթը գրուած է 1779 թուի հոկտեմբերի 3-ին № 4044. Եկատերինոսլաւի հայերի գաղթի առիթով, որ կատարուում էր Ազարիա եպիսկոպոսի և Սիմէոն վարդապետի առաջնորդութեամբ և գաղթականների թիւն է արական և իգական 603 հոգի.

Երկրորդը գրուած է 1779 թ. հոկտեմբերի 15-ին № 4072, Ռէֆէի (Թէոդոսիա) հայերի գաղթի առիթով, որ կատարուում էր Խաչատուր Աբրամովի առաջնորդութեամբ և նրանց թիւն է արական և իգական 651 հոգի.

Երրորդը գրուած է 1779 թ. հոկտեմբերի նոյնպէս 15-ին. № 4073. Կարասու-Բազարի հայերի գաղթի առիթով, որ կատարուում էր Մելքիսէթ Բեգրոսովի առաջնորդութեամբ և նրանց թիւն էր 1892 հոգի։ Բոլոր երեք քաղաքների գաղթականների թիւը միասին 3146 մարդ։

Պ. Լ. Մ. Մելքիսէթ-Բէկովի գրքոյկի բովանդակութիւնը թարգմանաբար մէջ բերինք «Արարատ»ի ընթերցողների համար, համոզուած լինելով որ մեր գաղթականութեան պատմութիւնը միշտ էլ հետաքրքիր և խրատական կարող է լինել մեզ համար։

Բեսարաբիայի և Նոր-Նախիջևանի հայերի թուի և նրանց աճելութեան մասին մի գաղափար տալու համար ունում ենք մի ցուցակ, որ կազմել ենք 1895 թուին՝ առնելով 1879 և 1894 թուականները. ընթերցողները այդ երկու թուականների համեմատութեամբ կը տեսնեն, թէ հայերը ուր աճում են և ուր նուազում և ապագայում ուր տեղի հայերին ինչ ելք է վիճակուած։

№№	ՏԵՂԻ	ԵԿԵՂԵՑԻ	Ըստ ցուցակի 1879			Ըստ ցուցակի 1894		
			Տուն	Ընտան.	Իրտան.	Տուն	Ընտան.	Իրտան.
1	Ս. Պետերբուրգ	Ս. Կատարինէ դերեզմանոցի	72	132	120	—	350	150
2	Մոսկուա	Վերափոխմ. Ս. Աստուծոյ Ս. Յարութիւն. Ս. Խաչի	51	158	115	—	300	200
3	Խարկով	Աղօթատուն	21	40	17	—	100	110
4	Կիև	,,	8	69	40			
5	Պոլտավա	—	6	7	2			
6	Բոլկրադ	—	2	2	4			
7	Քիշնև	Ս. Աստուծոյ	104	200	221	75	180	124
8	Նիմոբէն գ.	—	—	—	—	5	11	14
9	Բուդէշտ գ.	—	4	16	11	1	2	2
10	Սագա գ.	—				3	3	6
11	Սիոբէն					3	7	5
12	Օրէնէյ	Ս. Աստուծոյ	23	53	52	—	130	168
13	Վատուլիկայ գ.	—	6	18	24			
14	Ցիրերիկա գ.	—	2	3	1			
15	Բէլց քաղաք	—	16	36	37			
16	գիւղորայք 10	—	12	39	26			
17	Սարոկա գիւ. գիւղորայք 8		10	30	22			
18	Հօթին քաղաք	Ս. Յովհաննէ	4	12	16		4	8
	ի գաւառին	—	1	1	1			
19	Հնչեշտ գիւղաք.	Ս. Աստուծոյ	43	96	83		92	77
	ի չրջակայ վեց գիւղորայս	—	9	16	11			
20	Աքիրման քաղ.	Ս. Աստուծոյ	160	336	364		218	325
21	Իզմայիլ քաղ.	Ս. Աստուծոյ	29	72	58		46	62

Հ. Հ.	ՏԵՂԻ	ԵԿԵՂԵՑԻ	Հաս. ցուցակի 1879			Հաս. ցուցակի 1891		
			Տունք	Էրամ.	Իգամ.	Տունք	Էրամ.	Իգամ.
	Խերսոնի Ճանանց							
22	Օպեսսա	Ս. Լուսաւորիչ	202	309	276	—	350	420
23	Գրիգորիոպոլ	Ս. Պօղոս Պետրոս	75	179	183			
		Ս. Աստուածածին	41	114	106		128	159
	Տաւրիկեան Ճան.							
24	Սիմֆերոպոլ	Ս. Աստուածածին	224	480	568	205	470	523
25	Խարսուբաղար	Ս. Աստուածածին	104	262	248	90	179	214
	Ի գիւղաքաղաքս	—	17	62	44			
26	Մելիտոպոլ	Ս. Աստուածածին					152	125
27	Օրբաղաք	Ս. Աստուածածին	91	211	252		100	115
28	Բախչիսարայ	?	6	13	14		14	11
29	Եալթա		7	18	17	—	—	—
	Օտաբականք		—	16	—	—	—	—
30	Սեւաստոպոլ		8	20	18	—	—	—
31	Եւպատորիա	Եկեղ.	16	50	58	—	80	58
32	Հին Խրիմ	Ս. Աստուածածին	81	230	225	—	191	210
33	Թէոդոսիա	Եկեղեցիք չորս	115	242	247	—	252	262
34	Նոգայդք	Ս. Աստուածածին	38	92	103	—	85	68
35	Կերչ	Ս. Հրեշտակապետաց	78	168	163	70	185	152
	Նախանգիպազակացի Գոճի							
ա.	Ն. Նախիջեւան	Ս. Լուսաւորիչ	368	1221	1042	425	—	—
		յօտարութեան	69					
բ		Ս. Աստուածածին	299					
		յօտարութեան	120			320	—	—
գ.		Ս. Համբարձման	268			315	—	—
		յօտարութեան	42					
դ.		Ս. Նիկողայոս	320	983	865	360	—	—
		յօտարութեան	150					

Հ Հ	ՏԵՂԻ	ԵԿԵՂԵՑԻ	Հոտ ցուցակի 1879			Հոտ ցուցակի 1894		
			Տուն	Ընտ.	Բոլոր	Տուն	Ընտ.	Բոլոր
ե.		Ս. Թէոդորոս	185	536	512	245	—	—
		յօտարութեան	76					
զ.		Ս. Գէորգ	147	386	342	148		
		յօտարութեան	42				—	—
է		Ս. Յովհաննէս Մկրտիչ գերեզմանատուն	—	—	—	—	—	—
38	Զաղթը գիւղ	Ս. Հմրբձման	501	1815	1668			
		Նորեկք	11	32	32	800	2458	2205
39	Թոխաթ	Ս. Սարգիս	525	1691	1476	750	2205	2069
40	Մեծ Սալա	Ս. Աստուածին	280	934	882	357	1337	1199
41	Փոքր Սալա	Ս. Գէորգ	153	383	380	161	593	553
42	Նիովիթա	Ս. Յովհաննէս	145	375	367	166	493	496
43	Կատարին աւան	Աղօթ.	—	—	—	25	65	59
44	Ադարակ աւան սուրբ Խաչ վանուց չիք տեղեկութիւն զթուոց ժողովրդական, հոգուէ վանահայր							

Այս թուերը որքան և թերի ու պակասաւոր, սակայն մօտաւոր գաղափար են տալիս, թէ հայք ուր աճում և ուր նուազում են։ Զգալի նուազումն նկատւում է Բեսարաբիայի, Խերսոնի, Տաւրիկեան նահանգի գաւառական քաղաքներում ու գիւղերում, աճելութիւնն՝ մայրաքաղաքներում, կենդրոնական քաղաքներում և Նոր-Նախիջեւանի գիւղերում։

Յուսիկ Արքեպիսկոպոս